| **ՊԱՅՄԱՆԱԳԻՐ/ՕՖԵՐՏԱ** | **ДОГОВОР/ОФЕРТА** |
|---|---|
| 05 մայիսի 2026 թվական<br>Ք. Երևան<br><br>«ՕՊԷՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00546078, գրանցման համար՝ 999.110.1575146), գտնվելու վայրը՝ ՀՀ, 0018, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Զավարյան փ. 29, բն. 25, ի դեմս տնօրեն Արտյոմ Վարուժանի Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիմքով, այսուհետ՝ «Կատարող», մի կողմից, և<br>օֆերտան ընդունած գործունակ ֆիզիկական անձը, այսուհետ՝ «Հաճախորդ» կամ «Բաժանորդ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին<br><br>1. Պայմանագրում օգտագործվող հասկացությունները և դրանց նշանակությունը<br>1.1. Հասանելիություն՝ Հաճախորդին անձնական օգտագործման նպատակներով (այդ թվում՝ ծանոթություն, ընթերցում, դիտում) պայմանագրով սահմանված պայմաններով Տեղեկատվական և վերլուծական նյութին հասանելիության տրամադրում ինտերնետ բրաուզերի միջոցով՝ բաժանորդագրության պայմաններով վճարումը կատարելուց հետո սահմանված ժամկետում:<br>1.2. Տեղեկատվական և վերլուծական նյութ՝ երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ ներդրումների բնագավառում Կատարողի կողմից ընտրված տեղեկատվական աղբյուրների հիման վրա Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա շուկաներում ներդրումային գրավչություն ունեցող ակտիվներում, այդ թվում՝ բաժնետոմսերում, պարտատոմսերում, ածանցյալ ֆինանսական գործիքներում, թվային (կրիպտո) ակտիվներում, կատարողի մշակած մեթոդաբանության կիրառմամբ և կատարողի ներքին չափանիշներին համապատասխան, Կատարողի կողմից տարբեր պարբերականությամբ (օրական/շաբաթական/ամսական/եռամսյակային/ տարեկան) պատրաստվող թեմատիկ վերլուծական դիտարկումներ, որոնք ներկայացված են Կատարողի Կայքում էլեկտրոնային ձևով և հասանելի են Հաճախորդին ՝Բաժանորդագրության պայմաններով:<br>1.3. Հաճախորդ՝ ինտերնետ ցանցի օգտատեր, որը Պայմանագրի պայմաններն ընդունել է Կատարողի Կայքում գրանցվելու և հասանելիության տրամադրման համար կանխավճար կատարելու միջոցով կամ ներբեռնել է Տեղեկատվական և վերլուծական նյութ:<br>1.4. Կատալոգ՝ Տեղեկատվական վերլուծական նյութերի ամբողջություն:<br>1.5. Անձնական գրասենյակ՝ Հաճախորդի | 05 мая 2026 г.<br>Ереван<br><br>Общество с ограниченной ответственностью «ОПЭС» (ИНН: 00546078, регистрационный номер: 999.110.1575146), место нахождения: Республика Армения, 0018, г. Ереван, административный район Кентрон, ул. Заваряна, д. 29, кв. 25, в лице директора Григоряна Артема Варужановича, действующего на основании устава, далее именуемое "Исполнитель", с одной стороны, и дееспособное физическое лицо, принявшее оферту, далее именуемое "Клиент» или "Абонент", с другой стороны, заключили настоящий договор (далее именуемый «Договор») о следующем:<br><br>1. Термины, используемые в Договоре и их значение<br>1.1. Доступ - предоставление Клиенту доступа к Информационно-аналитическому материалу на условиях Договора в личных целях (в том числе, ознакомление, чтение, просмотр) через интернет браузер после оплаты на условиях Подписки.<br>1.2. Информационно-аналитический материал – подготовленные Исполнителем, на основе отобранных им информационных источников в области долгосрочных, среднесрочных, краткосрочных инвестиций на армянских или иностранных рынках в имеющие инвестиционную привлекательность активы, в том числе акции, облигации, производные финансовые инструменты, цифровые (крипто) активы, с применением разработанной Исполнителем методологии и в соответствии с внутренними стандартами Исполнителя тематические аналитические обзоры, размещаемые по мере подготовки Исполнителем с различной периодичностью(ежедневные/еженедельные/ежемесячные/ежеквартальные/ежегодные), и содержащиеся в Каталоге, который представлен в электронном виде на Сайте Исполнителя, доступный Клиенту посредством сети интернет на условиях Подписки.<br>1.3. Клиент – пользователь сети Интернет, принявший условия Договора путем регистрации на Сайте Исполнителя и внесения авансового платежа за предоставление Доступа или скачавший Информационно- аналитический материал.<br>1.4. Каталог – совокупность Информационно-аналитических материалов.<br>1.5. Личный кабинет – личная страница Клиента на Сайте Исполнителя, где Клиент может хранить информацию о себе, видеть свой статус, состояние Подписки, и т.п. Личный кабинет привязан к Учетной записи, доступ к нему закрыт Логином и Паролем.<br>1.6. Логин и Пароль – два уникальных набора символов, идентифицирующих Клиента, позволяющих Клиенту осуществлять доступ к Личному кабинету и Информационно-аналитическому материалу. |

անձնական էջը Կատարողի Կայքում, որտեղ Հաճախորդը կարող է պահպանել իր մասին տեղեկություն, տեսնել իր կարգավիճակը, Բաժանորդագրության վիճակը և այլն: Անձնական էջը կցված է Օգտատիրոջ հաշվին և պաշտպանված է Մուտքանունով և Գաղտնաբառով:

1.6. Մուտքանուն և Գաղտնաբառ՝ երկու /անհատական/ եզակի նշանների համակցություններ, որոնք նույնականացնում են Հաճախորդին և հնարավորություն են տալիս մուտք գործել Անձնական գրասենյակ և հասանելիություն ունենալ Տեղեկատվական և վերլուծական նյութին:

1.7. Բաժանորդագրություն՝ Տեղեկատվական և վերլուծական նյութերի գնագոյացման և վճարումների հաշվառման համակարգ:

1.8. Կատարողի Կայք՝ ինտերնետային տեղեկատվական ռեսուրս, որը պատկանում և կառավարվում է Կատարողի կողմից և տեղակայված է www.s-opes.am դոմեյնում:

1.9. Ներբեռնում՝ Տեղեկատվական վերլուծական նյութի գրանցում (պատճենում) Հաճախորդի համակարգչի, սմարթֆոնի կամ այլ սարքի /կրիչի/ վրա:

1.10. Օգտատիրոջ հաշիվ` Հաճախորդի անձնական տվյալները, որոնք պահվում են Կատարողի կայքի սերվերներում: Հաշիվը ստեղծվում է Օգտատիրոջ կողմից գրանցման ընթացակարգն անցնելու արդյունքում և կարող է անհրաժեշտ լինել կայքի որոշ հնարավորություններից կամ առանձին գործառույթներից օգտվելու համար:

1.11. Ակցեպտ՝ առաջարկն ընդունելու մասին այն անձի պատասխան կամ Պայմանագրով սահմանված գործողության կատարում, ում հասցեագրվել է օֆերտան: Ակցեպտը համարվում է ստացված այն պահից, երբ Հաճախորդը գրանցվում է Կատարողի Կայքում և հասանելիության տրամադրման համար կատարում կանխավճար կամ ներբեռնում է Տեղեկատվական վերլուծական նյութ

2. Պայմանագրի առարկան և էական պայմանները

2.1. Կատարողը Պայմանագրով սահմանված կարգով պարտավորվում է Հաճախորդին որոշակի օգտագործման ռեժիմով տրամադրել հասանելիություն Կատարողի ոչ հրապարակային (հանրային ուսումնասիրության և օգտագործման համար ոչ հասանելի/փակ/) Տեղեկատվական և վերլուծական նյութերին, որոնք տեղադրված են Կատարողի կայքում (այսուհետ նաև՝ Ծառայություններ), իսկ Հաճախորդը պարտավորվում է վճարել մատուցված Ծառայությունների դիմաց՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում:

2.2. Կատարողի Տեղեկատվական և վերլուծական նյութերը նպատակ ունեն Հաճախորդին տեղեկացնել համաձայնեցված

1.7. Подписка – система ценообразования на Информационно-аналитические материалы, учет платежей.

1.8. Сайт Исполнителя – информационный ресурс в сети Интернет, принадлежащий Исполнителю и администрируемый Исполнителем, расположенный на домене www.s-opes.am

1.9. Скачивание – запись (копирование) Клиентом Информационно- аналитического материала на свой компьютер, смартфон или иное устройство.

1.10. Учетная запись пользователя – личные данные Клиента, хранящиеся на серверах Сайта Исполнителя. Учетная запись создается в результате прохождения пользователем процедуры регистрации и может потребоваться для того, чтобы воспользоваться некоторыми возможностями или отдельными функциями Сайта.

1.11. Акцепт-ответ лица, которому адресована оферта, на принятие предложения или совершение действия, предусмотренного договором, о принятии предложения. Акцепт считается полученным с момента регистрации клиента на сайте исполнителя и внесения предоплаты за предоставление доступа или загрузки информационно-аналитического материала

2. Предмет договора и существенные условия

2.1. Исполнитель обязуется предоставить Клиенту в определенном режиме использования Доступ к непубличным (закрытым для публичного просмотра и использования) Информационно-аналитическим материалам Исполнителя, размещаемым на Сайте («Услуги Исполнителя»), а Клиент обязуется оплатить оказанные ему Услуги Исполнителя в порядке, предусмотренном Договором.

2.2. Информационно-аналитические материалы Исполнителя имеют своей целью информирование Клиента о независимом компетентном мнении Исполнителя по определенному кругу вопросов в рамках согласованной тематики. Информационно-аналитические материалы Исполнителя уникальны по своему содержанию, носят творческий характер, обладают признаками оригинальности и новаторства.

2.3. По форме выражения Информационно-аналитические материалы Исполнителя являются результатом интеллектуальной деятельности и подлежат правовой охране в соответствии с положениями Договора и действующего законодательства РА.

2.4. Информационно-аналитические материалы имеют для сторон содержательную ценность вне зависимости от формы их представления. Права Клиента по использованию информации, содержащейся в

| | |
|---|---|
| թեմայի շրջանակներում որոշակի հարցերի շուրջ Կատարողի անկախ իրավասու կարծիքի մասին: Կատարողի Տեղեկատվական և վերլուծական նյութերը նյութերը եզակի են իրենց բովանդակությամբ, ունեն ստեղծագործական բնույթ, ունեն ինքնատիպության և նորարարության հատկանիշներ:<br>2.3. Ըստ արտահայտման ձևի Տեղեկատվական և վերլուծական նյութերը հանդիսանում են մտավոր սեփականության օբյետտ և ենթակա են իրավական պաշտպանության՝ Պայմանագրի և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:<br>2.4. Տեղեկատվական և վերլուծական նյութերը կողմերի համար ունեն բովանդակային արժեք՝ անկախ դրանց ներկայացման ձևից: Հաճախորդին հասանելի դարձած Տեղեկատվական և վերլուծական նյութերում պարունակվող տեղեկատվության օգտագործման Հաճախորդի իրավունքները սահմանվում են Պայմանագրով:<br>2.5. Տեղեկատվական և վերլուծական նյութերի հասանելիությունը պահպանվում է Կատարողի կողմից և պաշտպանված է տեխնիկական պաշտպանության հատուկ միջոցներով: Կատարողը հաճախորդին հնարավորություն է տալիս մուտք գործել (հասանելիություն ունենալ) Տեղեկատվական և վերլուծական նյութերին ընդլայնված մուտքի ռեժիմով, որը ներառում է ինչպես կայքում տեղադրված նյութերին տեսողական ծանոթանալու հնարավորությունը (ընթերցում), այնպես էլ Կատարողի կողմից պատրաստված համապատասխան նյութերը ներբեռնելու հնարավորություն pdf ձևաչափով՝ Հաճախորդին պատկանող կրիչի վրա:<br>2.6. Կատարողի տեղեկատվական և վերլուծական նյութը (կախված իր տեսակից) ունի դրա պատրաստման և ներկայացման ստանդարտացված և տիպավորված ձև, ինչը, մասնավորապես, նշանակում է, որ Կատարողի կողմից Տեղեկատվական և վերլուծական նյութի պատրաստումը չի կրում անհատական բնույթ կոնկրետ անձի համար, այլ տրամադրվում է Կատարողի Հաճախորդներին սույն պայմանագրի հիման վրա, և Տեղեկատվական և վերլուծական նյութի պատրաստումը (սահմանված թեմայի շրջանակներում բովանդակության բացահայտումը) իրականացվում է Կատարողի կողմից՝ ելնելով սեփական վերլուծական կարծիքից և քննարկվող հարցերի սեփական ըմբռնումից:<br>2.7. Կատարողի Տեղեկատվական և վերլուծական նյութերը չեն հանդիսանում հաճախորդի կողմից որևէ ներդրումն իրականացման (իրականացումից հրաժարվելու) վերաբերյալ որոշումներ կայացնելու հանձնարարական և/կամ խորհրդատվական առաջարկություն: Հաճախորդը կրում է ինքնուրույն | информационно-аналитических материалах Исполнителя, к которым Клиент получает доступ определяются условиями Договора.<br>2.5. Доступ к Информационно-аналитическим материалам охраняется Исполнителем и защищен техническими средствами защиты. Исполнитель предоставляет Клиенту доступ к информационно-аналитическим материалам в режиме расширенного доступа, что включает в себя как возможность визуального ознакомления с размещенными на Сайте материалами (прочтение), так и возможность загрузки (скачивание) подготовленных Исполнителем аналитических обзоров в формате pdf на принадлежащий Клиенту носитель.<br>2.6. Информационно-аналитический материал Исполнителя (в зависимости от его вида) имеет стандартизированную и типизированную форму его подготовки и представления, что, в частности, означает, что: подготовка Исполнителем информационно-аналитического материала не носит индивидуального характера для конкретного лица, а предоставляется клиентам Исполнителя на основании настоящего Договора; наполнение информационно-аналитического материала (раскрытие содержания в рамках установленной тематики) осуществляется Исполнителем, исходя из его экспертного мнения и понимания рассматриваемых вопросов.<br>2.7. Информационно-аналитические материалы Исполнителя не являются рекомендацией для принятия Клиентом решений по осуществлению (отказу от осуществления) Клиентом каких-либо инвестиционных вложений. Клиент несет самостоятельную ответственность за принимаемые им инвестиционные, управленческие, корпоративные и иные решения и действия/бездействие.<br><br>3. Обязанности сторон.<br>3.1. Права и обязанности Исполнителя:<br>3.1.1. Исполнитель предоставляет Клиенту Доступ к Информационно-аналитическим материалам Исполнителя по выбранной в Каталоге Клиентом тематике и на выбранный клиентом срок Доступа. Срок Доступа к Информационно-аналитическим материалам начинает исчисляться не позднее 2 (двух) рабочих дней, с момента подтверждения произведенной Клиентом оплаты Услуг Исполнителя<br>на условиях Подписки. В течение оплаченного |

| | |
|---|---|
| պատասխանատվություն իր կողմից ընդունվող ներդրումային, կառավարչական, կորպորատիվ և այլ որոշումների և իր այլ գործողությունների/անգործության համար, իսկ Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի գործողությունների/անգործության որևէ հետևանքի համար:<br>3. Կողմերի պարտավորությունները<br>3.1. Կատարողի իրավունքներն ու պարտականությունները<br>3.1.1. Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդին տրամադրել հասանելիություն Կատարողի Տեղեկատվական և վերլուծական նյութերին՝ Հաճախորդի կողմից Կատալոգում ընտրված թեմայով և Հաճախորդի կողմից ընտրված հասանելության ժամկետով: Տեղեկատվական և վերլուծական նյութերի հասանելիության ժամկետի հաշվարկը մեկնարկվում է ոչ ուշ, քան Հաճախորդի կողմից բաժանորդագրության պայմաններով Կատարողի Ծառայությունների համար վճարումը հաստատվելու պահից սկսած 2 (երկու) աշխատանքային օր հետո: Հաճախորդի կողմից ընտրված հասանելիության ժամկետի ընթացքում Կատարողը Հաճախորդի համար ապահովում է շուրջօրյա հասանելիություն Կատարողի Տեղեկատվական և վերլուծական նյութերին:<br>3.1.2. Կատարողը իրավունք ունի փոփոխություններ և կամ լրացումներ կատարել Պայմանագրում և դրան կից հավելվածներում: Այդպիսի փոփոխությունները և/կամ լրացումները ուժի մեջ են մտնում և Կողմերի համար դառնում են պարտադիր դրանք Կատարողի կայքում տեղադրվելու պահից:<br>3.2. Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները<br>3.2.1. Կատարողի Տեղեկատվական և վերլուծական նյութերին հասանելիություն ստանալու համար Հաճախորդը պարտավորվում է գրանցվել կատարողի կայքում տեղադրված անձնական գրասենյակում՝ պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան:<br>3.2.2. Կատարողի Տեղեկատվական և վերլուծական նյութերին հասանելիությունը Հաճախորդին տրամադրվում է Հաճախորդի կողմից Կատարողի ծառայությունների արժեքի կանխավճարի վճարման պարտավորության պատշաճ կատարումից հետո, որը սահմանված է սույն պայմանագրին կից Բաժանորդագրության պայմաններում:<br>3.2.3. Հաճախորդն ինքնուրույն է ընտրում ներբեռնման համար իրեն անհրաժեշտ Տեղեկատվական և վերլուծական նյութերը:<br>3.2.4. Հաճախորդը ինքնուրույն հետևում է Կատարողի կայքում իր հասանելիության ժամկետի ավարտին:<br>3.2.5. Կատարողի կայքում Կատարողի | Клиентом срока Доступа Исполнитель обеспечивает Клиенту круглосуточный доступ к Информационно-аналитическим материалам Исполнителя.<br>3.1.2. Исполнитель вправе вносить изменения и/или дополнения в Договор и приложения к нему. Такие изменения и/или дополнения вступают в силу и становятся обязательными для сторон с момента размещения их на Сайте Исполнителя.<br>3.2. Права и обязанности Клиента:<br>3.2.1. Для получения Доступа к Информационно-аналитическим материалам Исполнителя Клиент должен быть зарегистрирован в Личном кабинете на Сайте Исполнителя, в соответствии с условиями Договора.<br>3.2.2. Доступ к Информационно-аналитическим материалам Исполнителя предоставляется Клиенту после надлежащего исполнения Клиентом обязательств по предварительной оплате цены Услуг Исполнителя, как это предусмотрено условиями Подписки.<br>3.2.3. Клиент самостоятельно выбирает необходимые ему Информационно-аналитические материалы для скачивания.<br>3.2.4. Клиент самостоятельно отслеживает срок истечения Срока доступа к Сайту Исполнителя.<br>3.2.5. О невозможности доступа к Информационно-аналитическим материалам Исполнителя при обращении к ним на Сайте Исполнителя Клиент обязан незамедлительно письменно сообщить Исполнителю для выяснения причин отказа в допуске или отсутствия допуска при обращении к Сайту Исполнителя и оперативного устранения таких причин.<br>3.2.6. Клиент вправе использовать предоставленные Исполнителем в соответствии с Договором Информационно-аналитические материалы в личных целях по своему усмотрению: скачивать, знакомиться с текстом, читать как целиком, так отдельные фрагменты, и т.п. Клиент<br>имеет право размещать копии Информационно-аналитического материала на любом персональном устройстве, которое ему принадлежит.<br>3.2.7. Клиенту запрещается: передавать либо рассылать Информационно-аналитические материалы третьим лицам как полностью, так и частично; сообщать публично сведения, содержащиеся в Информационно-<br>аналитический материале, по известным каналам вещания, таким как радио, телевидение и прочее; воспроизводить Информационно-аналитический материал, то есть изготавливать экземпляры Информационно-аналитического материала или его частей в любой материальной форме, если это воспроизведение имеет цель дальнейшего распространения; доводить Информационно- |

Տեղեկատվական և վերլուծական նյութերին անհասանելիության մասին Հաճախորդը պարտավոր է անհապաղ գրավոր տեղեկացնել Կատարողին՝ Կատարողի կայքում թույլտվության մերժման կամ թույլտվության բացակայության պատճառները պարզելու և այդպիսի պատճառները վերացման համար:

3.2.6. Հաճախորդն իրավունք ունի Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված կարգով տրամադրված համապատասխան Տեղեկատվական և վերլուծական նյութերն օգտագործել անձնական նպատակներով՝ իր հայեցողությամբ դրանք ներբեռնել, ծանոթանալ տեքստին, կարդալ ինչպես ամբողջությամբ, այնպես էլ առանձին հատվածներ և այլն: Հաճախորդն իրավունք ունի տեղեկատվական և վերլուծական նյութի պատճենները տեղադրել իրեն պատկանող սարքի սարքավորման կրիչի վրա:

3.2.7. Հաճախորդին արգելվում է՝ Տեղեկատվական և վերլուծական նյութերը փոխանցել կամ այլ կերպ հասանելի դարձնել երրորդ անձանց, ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասնակիորեն, հանրայնացնել կամ հաղորդել տեղեկատվական-վերլուծական նյութում պարունակվող տեղեկությունները հեռարձակման ուղիներով, ինչպիսիք են ռադիոն, հեռուստատեսությունը և համացանը և այլն, վերարտադրել Տեղեկատվական և վերլուծական նյութը, այսինքն՝ պատրաստել Տեղեկատվական և վերլուծական նյութի կամ դրա մասերի օրինակներ ցանկացած նյութական ձևով, եթե այդ վերարտադրությունն ունի հետագա տարածման նպատակ, Ինտերնետ ցանցի /համացանցի/ և/կամ այլ թվային ցանցերի օգտագործմամբ Տեղեկատվական և վերլուծական նյութը հանրամատչելի դարձնել, այդ թվում՝ Տեղեկատվական և վերլուծական նյութը տեղադրել ցանկացած ինտերնետային կայքերում, բջջային հավելվածներում և/կամ այլ ռեսուրսներում, վերափոխել, ձևափոխել, փոփոխել կամ այլ կերպ վերամշակել Տեղեկատվականև վերլուծական նյութի տեքստերը, դիագրամները, պատկերները, Տեղեկատվական և վերլուծական նյութն օգտագործել որևէ այլ եղանակով, որը սահմանված չէ պայմանագրով, իրականացնել Տեղեկատվական և վերլուծական նյութի օգտագործման հետ կապված ցանկացած այլ գործողություն, որը խախտում է մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մասին օրենսդրությունը:

3.2.8. Կայքում տեղադրված բոլոր տեղեկությունները Տեղեկատվական և վերլուծական նյութի օգտագործման կարգի, Տեղեկատվական և վերլուծական նյութի վճարման և պայմանագրի կատարման այլ առանձնահատկությունների վերաբերյալ հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր են Հաճախորդի կողմից կատարման համար:

аналитический материал до всеобщего сведения с использованием сети Интернет и прочих цифровых сетей, в том числе размещать Информационно-аналитический материал на любых интернет-сайтах, в мобильных приложениях и иных ресурсах; переделывать, изменять или прочим образом перерабатывать тексты, диаграммы, изображения Информационно-аналитического материала; использовать Информационно-аналитический материал каким-либо иным способом, кроме определенных Договором; осуществлять любые иные действия в отношении использования Информационно-аналитического материала, нарушающие законодательство о защите интеллектуальных прав;

3.2.8. Вся информация, размещенная на Сайте о порядке пользования Информационно-аналитическим материалом, оплаты Информационно-аналитического материала и прочих особенностях исполнения Договора, является неотъемлемой частью Договора и обязательна к исполнению Клиентом.

3.2.9. По всем возникающим вопросам Клиент вправе обращаться в службу поддержки Исполнителя по адресу электронной почты: _______________.

4. Подписка и порядок осуществления расчетов.

4.1. Общая цена услуг Исполнителя по настоящему Договору формируется Клиентом при выборе необходимых ему Информационно- аналитических материалов на основе представленного на Сайте Исполнителя Каталога на условиях Подписки (приложение №1 к Договору).

4.2. Оплата производится авансовым платежом за каждый расчетный месяц.

4.3. Клиент вправе производить оплату за Услуги Исполнителя в пользу указанного им третьего лица (бенефициара). В этом случае, если такой бенефициар воспользуется своим правом и воспользуется оплаченными этим Клиентом Информационно-аналитическими материалами, он (бенефициар) становится Клиентом, полностью принявшим условия настоящего Договора, а тот Клиент, который произвел оплату в пользу этого бенефициара, теряет все права на использование оплаченных Услуг Исполнителя.

4.4. Оплата производится в электронном виде путем перехода на платежную систему: ___________________________ (далее – Платежная система).

| | |
|---|---|
| 3.2.9. Ցանկացած հարցի կապակցությամբ Հաճախորդն իրավունք ունի դիմել կատարողի աջակցման ծառայությանը հետևյալ՝ ________________________ էլեկտրոնային փոստի հասցեով: | 4.5. Переходя на страницу Платежной системы Пользователь вступает в персональные взаимоотношения с данным сервисом, становясь его клиентом и получателем услуги платежной системы по выполнению электронного онлайн платежа в адрес Исполнителя. Получение данной услуги пользователем производится по правилам соответствующего платежного сервиса. |
| 4. Բաժանորդագրությունը և վճարումների իրականացման կարգը | 4.6. Оплата цены Услуг Исполнителя считается принятой в момент поступления от Платежной системы специального автоматического сообщения Сайту об успешном выполнении операции, на основании которого Пользователь немедленно получает Доступ к Информационно-аналитическим материалам. При перенаправлении Пользователя с Сайта на страницу Платежной системы и последующих перенаправлениях на страницы выбранных Пользователем платежных систем, выбранная Пользователем сумма оплаты передается системам автоматически. |
| 4.1. Սույն պայմանագրով սահմանված Ծառայությունների ընդհանուր արժեքը ձևավորվում է Հաճախորդի կողմից բաժանորդագրության պայմաններով (որոնք սահմանված են Պայմանագրին կից Հավելված 1-ում) Կատարողի կայքում ներկայացված կատալոգի հիման վրա իրեն անհրաժեշտ Տեղեկատվական և վերլուծական նյութերի ընտրությամբ: | 4.7. Исполнитель вправе в одностороннем порядке изменять действующие цены (условия Подписки) путем размещения соответствующей информации на Сайте Исполнителя. Изменение цен не касается оплаченных Клиентом на дату изменений Услуг Исполнителя. |
| 4.2. Վճարումն իրականացվում է կանխավճարային վճարման եղանակով յուրքանչյուր հաշվետու ամսվա համար: | |
| 4.3. Հաճախորդն իրավունք ունի Կատարողի ծառայությունների դիմաց վճարում կատարել իր կողմից նշված երրորդ անձի (այսուհետ նաև՝ Շահառուի) օգտին: Այդ դեպքում, եթե Շահառուն իրացնի իր իրավունքը և օգտվի այդ հաճախորդի կողմից վճարված Տեղեկատվական և վերլուծական նյութերից, Շահառուն ինքբերաբար դառնում է /համարվում է/ սույն պայմանագրի պայմաններն ամբողջությամբ ընդունած հաճախորդ, իսկ այն հաճախորդը, որը վճարում էր կատարել Շահառուի օգտին, կորցնում է Կատարողի կողմից վճարված ծառայություններից օգտվելու բոլոր իրավունքները: | |
| 4.4. Վճարումը կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ վճարային համակարգին անցնելու միջոցով: ________________________ (այսուհետ նաև՝ Վճարային համակարգ): | 5. Ответственность сторон. Ограничение Ответственности исполнителя. |
| 4.5. Անցնելով Վճարային համակարգի էջ՝ Օգտագործողը անձնական իրավահարաբերության մեջ է մտնում Վճարային համակարգի ծառայության հետ՝ դառնալով համակարգի հաճախորդը և վճարային համակարգի ծառայության ստացողը՝ Կատարողի հասցեին էլեկտրոնային առցանց վճարում կատարելու համար: Օգտագործողի կողմից սույն կետով նշված ծառայության ստացումը կատարվում է համապատասխան վճարային համակարգի ծառայության կանոնների համաձայն: | 5.1. Клиент принимает на себя полную ответственность и риски, связанные с использованием Информационно-аналитического материала.<br>5.2. Исполнитель не несет ответственности за любые расходы Клиента или прямой либо косвенный ущерб, который может быть нанесен Клиенту вследствие использования Информационно-аналитического материала.<br>5.3. Сайт Исполнителя и все сопутствующие сервисы предоставляются на условиях «как есть», без каких-либо прямых или косвенных гарантий того, что указанные Сайт, и/или сервисы могут подходить или не подходить для конкретных целей использования. |
| 4.6. Ծառայությունների համար վճարումը համարվում է ընդունված այն պահին, երբ վճարման համակարգը ուղարկում է հատուկ ինքնաշխատ հաղորդագրություն կայքին գործողության հաջող իրականացման վերաբերյալ, որի հիման վրա Օգտագործողը/Հաճախորդը անմիջապես հասանելիություն է ստանում Տեղեկատվական և վերլուծական նյութերին: Օգտատիրոջ կողմից կայքից վճարային համակարգի էջ վերահղման և Օգտատիրոջ կողմից ընտրված վճարային համակարգերի էջերին հետագա վերահղման դեպքում Օգտատիրոջ կողմից ընտրված վճարման | 5.4. Ни при каких обстоятельствах Исполнитель не несет ответственности за любые расходы Клиента или прямой либо косвенный ущерб, включая упущенную выгоду или потерянные данные, вред чести, достоинству или деловой репутации, который может быть нанесен Клиенту вследствие использования Сайта и/или сопутствующих сервисов.<br>5.5. Исполнитель не несет ответственности перед Клиентом, если Клиенту по тем или иным причинам не |

գումարը փոխանցվում է համակարգերին ավտոմատ կերպով:

4.7. Կատարողն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել գործող Ծառայության արժեքները, ինչպես նաև բաժանորդագրության պայմանները՝ համապատասխան տեղեկատվություն տեղադրելով Կատարողի կայքում: Գների փոփոխությունը չի վերաբերում Հաճախորդի կողմից փոփոխությունների օրվա դրությամբ վճարված Ծառայություններին:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Հաճախորդը պատասխանատու է (կրում է անձնական պատասխանատվություն) եւ Տեղեկատվական և վերլուծական նյութերի որևէ եղանակով օգտագործման բոլոր հետևանքների համար:

5.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի որևէ ծախսի կամ վնասի (այդ թվում բաց թողնված օգուտի), կորսված համաբավի, պատվիր կամ արժանապատվության համար, որը Հաճախորդը ուղղակի կամ անուղղակի կրել է Տեղեկատվական և վերլուծական նյութը ցանկցած եղանակով օգտագործելու կամ չօգտագործելու արդյունքում և/կամ դրա հետևանքով:

5.3. Կատարողի կայքը և բոլոր այդ թվում՝ հարակից ծառայությունները ներկայացված են «ինչպես որ կա» սկզբունքով առանց որևէ ուղղակի կամ անուղղակի այնպիսի երաշխիքների, որ նշված Կայքը և/կամ ծառայությունները կարող են համապատասխանել Հաճախորդի հետապնդած նպատակներին, և դրանց կիրառումը կամ օգոտագործումը է Կարող է առաջ բերել Հաճախորդի ակնկալիքների իրականացմանը:

5.4. Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում, եթե Հաճախորդին այս կամ այն պատճառով դուր չի եկել իր կողմից ձեռք բերված Տեղեկատվական և վերլուծական նյութի բովանդակությունը, ձև, արժեքը և այլ բաղադրիչներ, բացառությամբ հաճախորդի մոտ տեխնիկական դժվարությունների/խափանումների/ բացակայության պայմաններում իր սարքում Տեղեկատվական և վերլուծական նյութը բեռնելիս և/կամ իր սարքում այդպիսի Տեղեկատվական և վերլուծական նյութը դիտելիս/կարդալիս, առաջացած տեխնիկական խնդիրների:

5.6. Կատարողը պատասխանատվություն չի կրում, եթե վճարած և մուտքի հասանալեիություն ստացած Հաճախորդը հասանելիության ժամկետի ընթացքում չի օգտվել իրեն տրամադրված հասանելիությունից և /ամ օգտագործել (այդ թվում՝ ներբեռնել դիտել) այն:

6. Իրավական պաշտպանություն

6.1. Հաճախորդն իրավունք ունի օգտագործել Կատարողի Տեղեկատվական և վերլուծական նյութում պարունակվող տեղեկատվությունը, որին

понравилось содержание, оформление, ценность и т.п. приобретенного им Информационно-аналитического материала надлежащего качества, то есть при отсутствии у Клиента технических затруднений при закачивании такого Информационно-аналитического материала на свое устройство и/или просмотре/чтении такого Информационно-аналитического материала на своем устройстве, при условии, что это устройство технически исправно и по своим параметрам соответствует требованиям к размещению подобных файлов.

5.6. Исполнитель не несет ответственность, если Клиент, оплативший и получивший Доступ, не воспользовался предоставленным ему Доступом в течение Срока Доступа.

6. Условия о правовой охране.

6.1. Клиент вправе использовать информацию, содержащуюся в Информационно-аналитическом материале Исполнителя, к которым Клиент получил доступ на основании настоящего договора, в следующих пределах: для личного использования, в режиме коммерческой тайны, без права предоставления, передачи, раскрытия информации, содержащейся в Информационно-аналитическом материале, третьим лицам, кроме как в случаях и на условиях, установленных действующим законодательством РА

6.2. Исключительные права на Информационно-аналитический материал как на результат интеллектуальной деятельности принадлежат Исполнителю. Информационно-аналитический материал является объектом авторских прав и охраняется в соответствии с законодательством РА. Клиент не вправе использовать Информационно-аналитический материал (или какую-либо из его частей) путем воспроизведения, распространения, публичного показа, передачи в эфир, путем сообщения по кабелю, доведения до всеобщего сведения, перевода, переработки или иными способами использования (в том числе путем воспроизведения, распространения или доведения до всеобщего сведения с использованием информационно- телекоммуникационных сетей, включая интернет, через рассылки и т.п.), кроме как в порядке, установленном условиями Договора.

6.3. По запросу Клиента режим использования Информационно-аналитического материла и содержащейся в нем информации может быть изменен путем подписания отдельного соглашения на условиях, оговоренных сторонами в момент заключения такого соглашения.

7. Уведомление об обработке персональных данных.

7.1. Клиент, соглашаясь с условиями настоящего Договора, дает свое согласие Исполнителю на обработку своих персональных данных.

7.2. Согласие дается на обработку следующих персональных данных: фамилия, имя, отчество; адреса электронной почты; номера контактных телефонов; пол;

հաճախորդը ստացել է հասանելիություն պայմանագրի հիման վրա, հետևյալ սահմաններում՝ անձնական օգտագործման համար՝ սահմանափակված առևտրային գաղտնիքի ռեժիմով, առանց երրորդ անձանց տեղեկատվական և վերլուծական նյութում պարունակվող տեղեկատվության տրամադրման, փոխանցման, բացահայտման իրավունքի, բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերի և պայմանների:

6.2. Տեղեկատվական և վերլուծական նյութի նկատմամբ բացառիկ իրավունքները, որպես մտավոր սեփականության օբյեկտ, պատկանում են Կատարողին: Տեղեկատվական և վերլուծական նյութը հեղինակային իրավունքի օբյեկտ է և պաշտպանված է ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Հաճախորդն իրավունք չունի օգտագործել տեղեկատվական և վերլուծական նյութը (կամ դրա որևէ մասը) վերարտադրման, տարածման, հրապարակային ցուցադրման, եթեր հաղորդման, մալուխով հաղորդման, հանրայնացմանը հասցնելու, թարգմանության, վերամշակման կամ օգտագործման այլ եղանակներով (այդ թվում ՝ վերարտադրման, տարածման կամ հանրայնացման հասցնելու այդ թվում՝ տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցերի, այդ թվում՝ ինտերնետի օգտագործմամբ, փոստային առաքումների միջոցով և այլն), բացառությամբ պայմանագրի պայմաններով սահմանված դեպքերի:

6.3. Հաճախորդի պահանջով Տեղեկատվական և վերլուծական նյութի, և դրանում պարունակվող տեղեկատվության օգտագործման ռեժիմը կարող է փոփոխվել, դրա վերաբերյալ Կողմերի կողմից առանձին լրացուցիչ գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

7. Անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնություն

7.1. Հաճախորդը, համաձայնություն տալով (ընդունելով, ակցքեպտով) սույն պայմանագրի պայմաններին, տալիս է իր անվերապահ համաձայնությունը Կատարողին իր անձնական տվյալների մշակման համար:

7.2. Համաձայնությունը տրվում է հետևյալ անձնական տվյալների մշակման համար՝ ազգանուն, անուն, հայրանուն, էլեկտրոնային փոստի հասցեներ, կոնտակտային հեռախոսահամարներ, սեռ, ծննդյան ամսաթիվ, հասցե (Երկիր, Տարածաշրջան), տեղեկատվություն Տեղեկատվական և վերլուծական նյութի ընտրության նախապատվությունների մասին, տեղեկատվություն ձեռք բերվող Տեղեկատվական և վերլուծական նյութերի քանակի մասին, օգտագործողի տվյալներ (տեղեկություններ գտնվելու վայրի մասին, Ինչ էջեր է բացում և ինչ կոճակներ է սեղմում Օգտատերը, IP հասցե, SID), տեղեկություններ ստացվող վճարումների մասին,

дата рождения; адрес (страна, регион); сведения о предпочтениях при выборе Информационно-аналитического материала; сведения о количестве приобретаемых Информационно-аналитических материалов; пользовательские данные (сведения о местоположении; какие страницы открывает и на какие кнопки нажимает Пользователь; IP-адрес; SID); сведения о поступающих платежах; реквизиты банковского счета.

7.3. В ходе обработки персональных данных будут совершены следующие действия: сбор; запись; систематизация; накопление; хранение; уточнение (обновление, изменение); извлечение; использование; передача (предоставление, доступ); блокирование; удаление; уничтожение.

7.4. Исполнитель может использовать персональные данные Клиента для его идентификации, уточнения данных платежа, предоставления персонализированных сервисов, обратной связи с Клиентом, обработки заявок и запросов, выполнения обезличенных статистических вычислений, улучшения качества услуг, оказываемых Клиенту.

7.5. Персональные данные Клиента обрабатываются в течение действия настоящего Договора. Клиент вправе отозвать свое согласие на обработку своих персональных данных путем направления письменного заявления по адресу, указанному в Договоре.

7.6. С Политикой Исполнителя в отношении обработки персональных данных можно ознакомиться в Приложении №2 к настоящему Договору.

8. Порядок действия договора.

8.1. Настоящий Договор вступает в силу и становится обязательным с момента присоединения к его условиям Клиентом и действует до полного и надлежащего исполнения сторонами принятых на себя обязательств.

8.2. Стороны освобождаются от ответственности за частичное или полное неисполнение обязательств по настоящему Договору в случае, если такое неисполнение явилось прямым следствием обстоятельств непреодолимой силы (форс-мажорных обстоятельств), возникших после заключения Договора, в результате событий чрезвычайного характера, в том числе: пожара, наводнения, эпидемии, землетрясения, урагана, войны, боевых действий другого характера, террористического акта или наложения органами государственной власти ограничений на деятельность любой из Сторон и других подобных обстоятельств, если эти обстоятельства Стороны не могли ни предвидеть, ни предотвратить разумными мерами.

8.3. Изменение и расторжение Договора возможны путем одностороннего отказа Исполнителя или по

բանկային հաշվի ռեկվիզիտներ:

7.3. Անձնական տվյալների մշակման ընթացքում կատարվելու են հետևյալ գործողությունները՝ հավաքում, գրանցում, համակարգում, կուտակում, պահպանում, պարզաբանում (թարմացում, փոփոխություն), արդյունահանում, օգտագործում, փոխանցում (տրամադրում, մուտք), արգելափակում, ջնջում, ոչնչացում:

7.4. Կատարողը կարող է օգտագործել հաճախորդի անձնական տվյալները նրա նույնականացման, վճարման տվյալների հստակեցման, անհատականացված ծառայությունների մատուցման, հաճախորդի հետ հետադարձ կապի, հայտերի և հարցումների մշակման, վիճակագրական հաշվարկների կատարման, հաճախորդին մատուցվող ծառայությունների որակի բարելավման համար:

7.5. Հաճախորդի անձնական տվյալները մշակվում են սույն պայմանագրի գործողության ընթացքում: Հաճախորդն իրավունք ունի հետ վերցնել իր համաձայնությունը իր անձնական տվյալների մշակման համար բացառապես գրավոր դիմում ուղարկելով պայմանագրում նշված հասցեով:

7.6. Անձնական տվյալների մշակման քաղաքականությունը ներկայացված է սույն պայմանագրին կից հավելված 2-ում:

8. Պայմանագրի գործողությունը

8 .1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և պարտադիր է դառնում Հաճախորդի կողմից դրա պայմաններին միանալու պահից, որը ներկայացված է սույն Պայմանագրով և գործում է մինչև կողմերի կողմից ստանձնած պարտավորությունների լիարժեք և պատշաճ կատարումը:

8.2. Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների մասնակի կամ ամբողջական չկատարման համար պատասխանատվությունից, եթե այդպիսի չկատարումը եղել է անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորային հանգամանքների) անմիջական հետևանք, որոնք առաջացել են պայմանագրի կնքումից հետո և ունեն արտակարգ և անհախթահարելի բնույթ, այդ թվում առաջացել են հրդեհի, ջրհեղեղի, համաճարակի, երկրաշարժի, փոթորիկի, պատերազմի, մարտական գործողությունների, ահաբեկչական ակտի կամ պետական իշխանության մարմինների կողմից որևէ մեկի գործունեության նկատմամբ սահմանափակումների կիրառման և նման այլ հանգամանքների հետևանքով, եթե այդ հանգամանքները կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխել ողջամիտ միջոցներով:

8.3. Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել Կատարողի կողմից միակողմանի

соглашению сторон, а также по основаниям, предусмотренным действующим законодательством РА.

8.4. В случае, если какое-либо положение или какая-либо часть положения Договора признаны недействительными или не имеющими юридической силы, остальные положения и части положений Договора остаются в полной силе и действии.

8.5. Все Приложения к настоящему Договору являются его неотъемлемой частью.

8.6. К настоящему Договору применяется законодательство Республики Армения. Все споры, предусмотренные настоящим договором, регулируются законодательством РА и подлежат рассмотрению компетентным судом РА.

8.7. Все документы и корреспонденция, предусмотренные настоящим Договором, отправляются исполнителю по следующему адресу: ________________________

Каждая из сторон обязана уведомить другую сторону об изменении своего адреса или других данных незамедлительно после такого изменения, но не позднее чем в течение одного рабочего дня. Сторона, не сообщившая о соответствующем изменении, несет ответственность за все его последствия.

Неотъемлемой частью настоящего Договора являются приложения, прилагаемые к нему: Приложение 1 "Условия подписки", Приложение 2 "Политика обработки персональных данных", Приложение 3 "Политика конфиденциальности".

Приложение 1: Условия подписки

Стоимость ежемесячной подписки устанавливается в размере 18 646 /восемнадцать тысяч шестьсот сорок шесть / драмов РА:

Подписка подходит для Клиентов, которые предпочитают принимать самостоятельные решения на основе общих рекомендаций.

Указанная версия включает в себя следующие услуги՝

- Углубленный анализ рынка и предоставление актуальной информации, которая поможет

հրաժարվելով կամ կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված հիմքերով:

8.4. Այն դեպքում, երբ պայմանագրի որևէ դրույթ կամ դրույթի որևէ մաս ճանաչվել է անվավեր կամ իրավաբանական ուժ չունեցող, պայմանագրի մնացած դրույթները կամ դրանց մասերը շարունակում են նալ մնում լրիվ ուժի և գործողության մեջ: Պայմանագրի մի մասի անվավերությունը չի կարող հանգեցել Պայմանագրի մյուս մասերի անվավերության:

8.5. Սույն պայմանագրի բոլոր հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասը և Պարտադիր են Հաճախորդի համար:

8.6. Սույն պայմանագրրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Սույն պայմանագրով նախատեսված բոլոր վեճերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ օրենսդրությամբ և ենթակա են քննության ՀՀ իրավասու դատարանի կողմից:

